


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՊԱՐՏՔԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2000

Սույն հաշվետվության մեջ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը ներառում է Հայաստանի Հանրապետության ներքին<sup>1</sup> պետական պարտքը և Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը:



<sup>1</sup> Կետագծերով նշված պարտավորությունները ՀՀ համար դեռևս ձևավորված չեն:

Հայաստանի Հանրապետության պետական պարտքը ստանձնվում է Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի կողմից:

Հայաստանի Հանրապետությունը իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով:<sup>2</sup>

### **ՀՀ պետական պարտքի ձևավորման նպատակները**

ՀՀ պետական պարտքի ձևավորման նպատակներ են հանդիսանում.

- պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը;
- վճարային հաշվեկշռի աջակցությունը և պահուստների համալրումը;
- կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության գերակայությունների ապահովումը, տնտեսության առաջնային ոլորտների զարգացման համար ներդրումային ծրագրերի ֆինանսավորումը;
- վարկային երաշխավորման պարտավորությունների իրագործումը;
- նախկինում ստանձնված պետական պարտքի վերաձևակերպումը;

### **ՀՀ պետական պարտքի ձևավորման և կառավարման իրավական հիմքերը**

ՀՀ պետական պարտքը ձևավորվում, կառավարվում, մարվում և սպասարկվում է համաձայն ՀՀ օրենսդրության: ՀՀ պետական պարտքը կանոնակարգող հիմնական օրենսդրական և ենթաօրենսդրական կանոնակարգերն են.

- Արտաքին պարտքի ձևակերպման միջազգային պայմանագրերը,
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը,
- Բյուջետային համակարգի մասին օրենքը,
- «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը,
- «ՀՀ արժեթղթերի շուկայի կարգավորման մասին » ՀՀ օրենքը,
- Պետական բյուջեի մասին տարեկան օրենքով,
- ՀՀ օրենքը ՀՀ միջազգային պայմանագրերի մասին,
- Պետական պարտքի մասին ՀՀ օրենքը<sup>\*</sup>
- «Պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման հիմնական պայմանները», «Պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը», «Պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման հիմնական պայմանները», «Պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը»:

Համաձայն բյուջետային համակարգի մասին օրենքի՝ պետական պարտքի կառավարումն իրականացնում է կառավարության լիազորված մարմինը՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:<sup>3</sup>

<sup>2</sup> ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 130, «Պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետության կամ համայնքի պարտավորությունների համար»

<sup>\*</sup> Պետական պարտքի մասին ՀՀ օրենքի նախագիծը ներկայումս քննարկման փուլում է

<sup>3</sup> «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 5 (ե)

Արտաքին պարտքը ձևավորվում է վավերացված միջազգային պայմանագրերի հիման վրա, որոնք գերակայող են մյուս բոլոր օրենսդրական ակտերի նկատմամբ:

## **ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

ՀՀ պետական պարտքի կառավարման հիմնական նպատակ է հանդիսանում պարտքի օպտիմալացումը (օպտիմալ կառուցվածքի սահմանում, պարտքի վերակառուցում ավելի բարենպաստ պայմաններով, ռիսկերի կառավարում):

Պետական պարտքի կառավարումն իր մեջ ներառում է.

- պետական պարտքի պլանավորում կարճաժամկետ, միջին ժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածում (հնարավոր աղբյուրների ուսումնասիրություն, ծավալներ, կառուցվածք, ներգրավման պայմաններ, շուկայի մասնակիցներ, ժամկետայնություն, եկամտաբերություն, պարտքի մեծության սահմանում ելնելով մակրոցուցանիշներից):
- համաձայն ծրագրվածի պարտքի ստանձնում (պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում, արտաքին պայմանագրերի ստորագրում և դրամական միջոցների ստացում), մարում և սպասարկում:
- պարտքի հաշվառում, վերլուծություն և վերահսկողություն:

*Կառավարման ամբողջ գործընթացում հիմնական և կարևորագույն սկզբունք է հանդիսանում շուկայի թափանցիկության, տեղեկատվության ազատ փոխանակման ապահովումը,, թողարկողի և նրա ֆինանսական գործակալի վարքագծերի կանխատեսելիությունը:*

## **ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

### **Ներքին պետական պարտքի ձևավորման աղբյուրները**

ՀՀ ներքին պետական պարտքի ձևավորման աղբյուր են հանդիսանում.

- ՀՀ ազգային արժույթով պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխումից ստացված հասույթը,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված փոխատվությունը (վարկերը)
- ՀՀ առևտրային բանկերից փոխատվությունը (վարկերը) ՀՀ կառավարությանը
- ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից փոխատվությունը (վարկերը) ՀՀ կառավարությանը:

Ներկայումս ՀՀ ներքին պետական պարտքի վերոհիշյալ աղբյուրներից օգտագործվում է գլխավորապես պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխումից ստացված հասույթը: Այս արժեթղթերի թողարկման նպատակը բյուջեի պակասորդի ֆինանսավորումն ու տարվա ընթացքում բյուջեի դրամական հոսքերի հարթեցումն է:

## Արտաքին պետական պարտքի ձևավորման աղբյուրները

- օտարերկրյա կազմակերպություններից, օտարերկրյա կառավարական մարմիններից, միջազգային կազմակերպություններից, վարկավորող բազմակողմ հաստատություններից փոխառությունները (վարկեր);
- ֆիզիկական և իրավաբանական անձանցից փոխառությունները (վարկերը)
- արտաքին երաշխիքները
- այլ աղբյուրներ:

Ներկայումս ՀՀ կառավարության արտաքին պարտքը ներառում է բազմակողմ (միջազգային կազմակերպություններ), երկկողմ (օտարերկրյա պետություններ և բանկեր) վարկատուներից փոխառությունները և ՀՀ կառավարության տրամադրած երաշխիքները:

## ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ՀՀ ներքին պետական պարտքի ձևավորման հիմնական աղբյուրը՝ պետական արժեթղթերը ըստ շրջանառության ժամկետի երկու տեսակ են.

- կարճաժամկետ՝ շրջանառության ժամկետը 7օրից մինչև 1 տարի,
- միջին ժամկետ՝ շրջանառության ժամկետը 15 ամսից մինչև 5 տարի:

Կարճաժամկետ պարտատոմսերը գեղյատկոսային արժեթղթեր են, որոնց համար եկամուտ է համարվում գնման գնի և անվանական արժեքի միջև եղած տարբերությունը, որը պարտատոմսի սեփականատերը ստանում է պարտատոմսի մարման օրը: Դրանք ոչ թղթային (էլեկտրոնային) են, հաշվառումը և հաշվարկները իրականացվում են ՀՀ Կենտրոնական բանկում: Պետական կարճաժամկետ պարտատոմսեր թողարկվել են 1995թ-ից սկսած:

Միջին ժամկետայնության պարտատոմսերը սկսել են թողարկվել 2000թ-ի մարտ ամսից: Մարտի 7-ին կայացել է միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի առաջին թողարկումը 15 ամիս մարման ժամկետով: Միջին ժամկետայնության պարտատոմսերը նույնպես ոչ թղթային են, դրանք կարող են վաճառվել անվանական արժեքի նկատմամբ հավելավճարով կամ գեղյատկոսով: Արժեկտրոնը ֆիքսված տոկոսով է և արժեկտրոնային վճարումը կատարվում է եռամսյակը, կիսամյակը կամ տարին մեկ անգամ:

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման նպատակը տարվա ընթացքում ստացվող եկամուտների և ծախսերի հարթեցումն է, իսկ միջին ժամկետայնության պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված հասույթը ներկայումս ուղղվում է բյուջեով սահմանված տարեկան դեֆիցիտի ֆինանսավորմանը: Ապագայում միջին ժամկետայնության պարտատոմսերը (կամ դրանց մոդիֆիկացիաները) կարող են թողարկվել նաև տարբեր ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար:

Ներքին պետական պարտքի կառավարումը ենթադրում է.

- ֆինանսական ռիսկերի դիվերսիֆիկացիա
- փոխառության աղբյուրների ընդլայնում
- սկզբունքորեն նոր պարտքային գործիքների մշակում և կիրառում
- առավել երկարաժամկետ գործիքների տեսակարար կշռի մեծացում պարտքի ընդհանուր ծավալում:


ՀՀ ներքին պետական պարտքի ձևավորումը սկսվեց 1995թ-ի սեպտեմբեր ամսին՝ պետական պարտատոմսերի առաջին թողարկմամբ:

Գոյության հինգ տարիների ընթացքում այս շուկան համարվել է տարածաշրջանի ամենակազմակերպված շուկաներից մեկը, և ձեռք է բերել մեծ վստահություն՝ շնորհիվ այն բանի, որ եկամտաբերության տատանումները երբեք կործանարար չեն եղել շուկայի

համար, մշտապես շրջանառության մեջ են եղել ոչ մեծ ծավալի արժեթղթեր և դրանով իսկ պարտքը մշտապես եղել է կառավարելի:


Չնավորման առաջին տարվա ընթացքում շուկայում էական իրադարձություններ տեղի չունեցան, քանի որ ամսեկան թողարկումների ծավալները մեծ չէին և բյուջեի պակասորդի ֆինանսավորման էական խնդիր չէին լուծում:

**Պետական պարտատոմսերի առաջնային շուկայի հիմնական բնութագրերը 1995թ.**  
Նկար 1




1996թ-ի վերջին պետական պարտատոմսերի թողարկումները զգալիորեն աճեցին, որը հնարավորություն տվեց մոտ 8,5 մլրդ. դրամով ֆինանսավորել 1996թ-ի պետական բյուջեի դեֆիցիտը:

**Պետական պարտատոմսերի առաջնային շուկայի հիմնական բնութագրերը 1996թ.**  
Նկար 2




1997թ-ին թողարկումների ծավալների աճին զուգընթաց աճեց նաև թողարկումների ժամկետայնությունը: Եթե 1995-96թթ. թողարկումների գերակշիռ մասը 28 և 91 օրյա ՊԿՊ-եր էին, ապա 1997թ-ին թողարկումներում զգալիորեն ավելացավ 182, 273, 364 օրյա ՊԿՊ-երի տեսակարար կշիռը:

**Պետական պարտատոմսերի առաջնային շուկայի հիմնական բնութագրերը 1997թ.**  
Նկար 3




1998թ-ը հայկական ՊԿՊ-երի շուկայում սկսվեց որոշ նորամուծություններով, դրանք էին՝ ՊԿՊ-ներից ստացված շահույթը շահութահարկով հարկվելը, ՀՀ կենտրոնական բանկի վարկային գծի վերաձևակերպումը և արժեթղթավորումը: 1998թ-ին հիմնական ուշադրության առարկան ՊԿՊ-երի եկամտաբերության իջեցումն էր, որին հաջողվեց հասնել արդեն մայիս-հունիս ամիսներին: Այսպես, եթե մարտ ամսի թողարկումների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 62,06% էր, ապա ապրիլին այն 49,53% էր, մայիսին՝ 38,65%, իսկ հունիսին՝ 34,41%: Սակայն, ռուսական և ասիական ֆինանսական ճգնաժամները հանգեցրին հայկական պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի անկման, զգալիորեն նվազեց պետական պարտատոմսերում ոչ ռեզիդենտ ներդրողների տեսակարար կշիռը, որը սեպտեմբեր ամսից հանգեցրեց ՊԿՊ-երի թողարկումների թերտեղաբաշխման և եկամտաբերության բարձրացման: Արդյունքում 1998թ-ի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը բացասական էր և կազմեց – 1,908.56 մլն. դրամ:

**Պետական պարտատոմսերի առաջնային շուկայի հիմնական բնութագրերը 1998թ.**  
Նկար 4



1999թ-ը դարձավ 1998թ-ի ֆինանսական ճգնաժամի հետևանքների վերացման, ինչպես նաև 2000թ-ին եկամտաբերության իջեցման ու պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման մեծացման համար նախադրյալներ ստեղծելու տարի: Այնուամենայնիվ, այս պայմաններում հաջողվեց 1999թ-ի պետական բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորել 1,956.2 մլրդ. դրամով: 1999թ-ի հոկտեմբերից ուժի մեջ մտան «Հայաստանի Հանրապետության պետական (զանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման հիմնական պայմաններն» ու «Հայաստանի Հանրապետության պետական (զանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը», որոնք ՊԿՊ-երի շուկան որակական նոր հարթություն բերեցին:

**Պետական պարտատոմսերի առաջնային շուկայի հիմնական բնութագրերը 1999թ**  
Նկար 5



**ՀՀ ներքին պետական պարտքի կառավարման բնագավառում  
1999թ-ին կատարված նորամուծությունները**

Ներքին պետական պարտքի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, պետական արժեթղթերի շուկայի նկատմամբ ներդրողների վստահության ամրապնդման նպատակով 1999թ-ին ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԲ աշխատակիցների համատեղ երկարատև աշխատանքի արդյունքում մշակվեց պետական արժեթղթերի շուկայի կարգավորման որակապես նոր իրավական հիմք «Պետական (զանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման հիմնական պայմանները» և «Պետական (զանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը»: Այս փաստաթղթերով շուկայում հաստատվեցին գործելակերպի նոր կանոններ:

Առաջին հերթին հստակեցվեց ՊԿՊ առաջնային շուկայում մասնակիցների շրջանակները, սահմանվեցին շուկայի նոր ենթակառուցվածքները: Պարտատոմսերի թողարկող է հանդիսանում Ֆինանսների նախարարությունը, իսկ տեղաբաշխումն անց է կացվում Կենտրոնական բանկի կողմից կազմակերպվող աճուրդների միջոցով: Աճուրդներին հայտեր կարող են ներկայացնել երկու ինստիտուտներ՝ պետական պարտքի կառավարման գծով կառավարության գործակալների ինստիտուտը և մասնակցության իրավունքի որոշակի սահմանափակումներ ունեցող Գիլդերների ինստիտուտը: Պարտքի կառավարման գծով կառավարության Գործակալները որոշակի արտոնությունների դիմաց կրում են հստակ սահմանված պարտավորություններ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նոր կարգի համաձայն, շուկայում որակապես նոր մասնակիցներ են



համարվում ոչ բանկ դիւերները: Պարտքի կառավարման կարևորագույն հիմնախնդիր է համարվում ներդրողների (գնորդների) դիվերսիֆիկացումը: Արդյունքում՝ նվազեցվում է պետության ռիսկը մեկ (մի քանի) խոշոր ներդրողից կախվածության իմաստով, դրանից շահում է նաև շուկան՝ որտեղ ստեղծվում է առավելագույնս ազատ մրցակցային միջավայր:

Շուկայի նոր մասնակիցների թվում է նաև Գ-անձապետական պահառու համակարգը, որը հնարավորություն տվեց անհատ ֆիզիկական անձանց, անկախ ռեզիդենտությունից, ինչպես նաև ռեզիդենտ իրավաբանական անձանց գնել պետական կարճաժամկետ պարտատոմսեր անմիջապես թողարկողից՝ ազատվելով միջնորդավճարներից և հարկերից: Այս համակարգը սկսեց գործել 1999թ-ի մայիս ամսից: Իր ստեղծման պահից մինչև 1999թ-ի տարեվերջ այն 54 կազմակերպված աճուրդներից մասնակցել է 53-ին 313,480,000 դրամ ներդրման ծավալով: Այդ ժամանակահատվածում մարվել է 142,500,000 դրամի պարտատոմս, դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 141,735,510 դրամ: 1999թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ եղել է 169.730.000 դրամի պարտատոմս:

Համակարգի հետագա զարգացման շրջանակներում նախատեսվում է դրա աշխարհագրական ցանցի ընդլայնում և նոր՝ խնայողական պարտատոմսերի թողարկում:

Այսպիսով, կարելի է նշել, որ կատարված հսկայական աշխատանքը բխում է շուկայի անընդհատ զարգացման պահանջներից և ևս մեկ քայլ է դեպի հայկական պետական արժեթղթերի զարգացած, քաղաքակիրթ, գրավիչ, վստահելի և ցածր ռիսկային շուկայի ստեղծումը:


### ***ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկան 2000թ.***

Պետական պարտատոմսերի շուկայի զարգացմանն ուղղված քաղաքականության տրամաբանական շարունակությունն էր 2000թ-ին մշակված ռազմավարությունը: 2000թ-ին ներքին պարտքի կառավարումն ուղղվեց նոր՝ առավել երկարաժամկետ պարտատոմսերի մշակմանն ու ներդրմանը, որով ներքին պարտքի կառուցվածքը կրեց որակական փոփոխություններ: Պետք է հստակորեն արձանագրել, որ ՊԿՊ-ները իրենց բովանդակությամբ արդեն իսկ չէին կարող ծառայել որպես բյուջեի պակասորդի ֆինանսավորման աղբյուր: Այս նկատառումով նախորդ տարիների համեմատ էականորեն նվազեցվեց ՊԿՊ-ների թողարկումների ծավալները, արդյունքում՝ դրանց տեսակարար կշիռը ներքին պետական պարտքի ընդհանուր ծավալում:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը մշակեց և ներդրեց «Պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմաններն» ու «Պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը», որի հիման վրա 2000թ-ի մարտի 7-ին առաջին անգամ թողարկվեց միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր, որոնց միջոցով էլ նախատեսվում էր լուծել պետբյուջեի պակասորդի 2,000.0 մլն. դրամով ֆինանսավորման խնդիրը:

**Պետական պարտատոմսերի առաջնային շուկայի հիմնական բնութագրերը 2000թ.**

Նկար 6



2000թ-ին տեղի է ունեցել պետական պարտատոմսերի 118 թողարկում 46,237,374,000 դրամ ընդհանուր ծավալով: Տեղաբաշխվել է 43,847,159,000 դրամի պարտատոմս: Պահանջարկը թողարկման ծավալը գերազանցել է 2.20 անգամ:

Աղյուսակ 1

	Թողարկում	Պահանջարկ	Տեղաբաշխում	Պ/Թ
<b>I եռ.</b>	11,487,374,000	33,325,737,000	11,487,374,000	2.90
<b>II եռ.</b>	14,000,000,000	35,629,817,000	13,965,142,000	2.54
<b>III եռ.</b>	12,000,000,000	21,501,010,000	11,272,388,000	1.79
<b>IV եռ.</b>	8,750,000,000	11,043,063,000	7,122,255,000	1.26
<b>Ընդամենը</b>	46,237,374,000	101,499,627,000	43,847,159,000	2.20

118-ից 10-ը եղել են պետական միջին ժամկետայնության պարտատոմսերի, իսկ մնացած 108-ը՝ ՊԿՊ-երի թողարկումներ, որից 10-ը նախկինում թերտեղաբաշխված ՊԿՊ-երի տեղաբաշխման աճուրդներն էին:

Աղյուսակ 2

	Թողարկում	որից միջին ժամկետ. պարտատոմս	ՊԿՊ	նախկինում թերտ. պ. տեղաբաշխում
<b>I եռ.</b>	34	1	33	10
<b>II եռ.</b>	33	3	30	0
<b>III եռ.</b>	27	3	24	0
<b>IV եռ.</b>	24	3	21	0
<b>Ընդամենը</b>	118	10	108	10

2000թ-ին պետական պարտատոմսերի եկամտաբերությունները տատանվել են 13.00-49.8799%-ների սահմաններում, իսկ միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 24.8170%:

Աղյուսակ 3

	Նվազ. եկամտ.	Առավ. եկամտ.	Միջ. կշռվ. եկամտ.	Թողարկվ. պարտ. միջ. ժամկետ. (օր)	Տեղ. պարտ. միջ. ժամկետ.(օր)
I եռ.	20.0000	49.8799	31.7349	171	171
II եռ.	13.0000	26.0000	19.4033	223	223
III եռ.	17.3000	29.0000	23.3823	272	269
IV եռ.	22.0000	29.7340	26.5450	218	212
2000թ.	13.0000	49.8799	24.8170	222	219

Պահանջարկի զգալի մասը բաժին է ընկել ՊԿՊ-երի շուկայում գործող 7 գործակալներին՝ 80.46%-ը, կամ թողարկման 176.63%-ը, համապատասխանաբար՝ ՊԿՊ-երի շուկայում գործող 17 դիլերներին բաժին է ընկել պահանջարկի 19.01%-ը և թողարկման՝ 41.72%-ը: Գանձապետական Պահառու համակարգին բաժին է ընկել պահանջարկի 0.53%-ը կամ թողարկման 1.16%-ը: Տեղաբաշխված ծավալի 78.26%-ը ձեռք են բերել գործակալները, 20.52%-ը՝ դիլերները, 1.22%-ը՝ ԳՊ-ն:

Աղյուսակ 4


	Գործակալներ	Դիլերներ	ԳՊ	Ընդամենը
I եռ.	75.16	23.65	1.19	100.00
II եռ.	90.07	9.48	0.45	100.00
III եռ.	76.39	22.54	1.07	100.00
IV եռ.	63.06	33.90	3.04	100.00
2000թ.	78.26	20.52	1.22	100.00

2000թ. ընթացքում Գանձապետական պահառու համակարգը 98 աճուրդից մասնակցել է 82-ին: Ներդրման ծավալը կազմել է 536.401.000 դրամ, մարվել է 339.793.000 դրամի պարտատոմս:

ԳՊ-ով ներդրումները և մարումները 2000թ.

Նկար 7


Ընդամենը ղեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ է եղել 338.428.000



դրամի պարտատոմս: Գեպո հաշիվների քանակը կազմել է 324:

**Պ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը  
2000թ.**

Նկար 8



Ներդրման ծավալը 1999թ-ի նկատմամբ աճել է 71.11%-ով, ԳՊ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 137.49%-ով:

Գեֆիցիտի ֆինանսավորումը 2000թ-ի ընթացքում կազմել է 180.111.246 դրամ, որը 1999թ-ի նկատմամբ աճել է 43.12%-ով:

Աղյուսակ 5

2000թ.	տեղաբաշխում	մարում	միջին եկամտաբերություն	դեֆիցիտի ֆինանսավորում
<b>I եռամսյակ</b>	136.550.000	82.834.000	31.80%	47.562.259
<b>II եռամսյակ</b>	62.887.000	165.006.000	18.92%	(83.217.884)
<b>III եռամսյակ</b>	120.501.000	49.899.000	22.55%	61.483.415
<b>IV եռամսյակ</b>	216.463.000	42.054.000	26.37%	154.283.455
<b>Ընդամենը</b>	536.401.000	339.793.000		180.111.245

**ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկան 2000թ.**

2000թ. պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում հատկանշական էր գործարքների և նրանց ծավալների զգալի աճը նախորդ տարիների համեմատ: Մեր գնահատմամբ աշխուժության հիմնական պատճառ հանդիսացավ նոր կարգի ներդրումը, համաձայն որի բոլոր գործակալները պարտավոր են կատարել պետական պարտատոմսերի ամենօրյա գնանշումներ և կատարել գործարքներ այդ գնանշումներով: Բացի այդ, 2000թ-ի սկզբում պարտատոմսերի առաջնային շուկայում եկամտաբերության կտրուկ անկումը, պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի զգալի աճը ևս նպաստեցին երկրորդային շուկայի աշխուժացմանը: Էական հանգամանք է նաև այն, որ 2000թ-ին ՀՀ կենտրոնական բանկի վարած դրամավարկային և ՀՀ կառավարության վարած հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացումը առավել արդյունավետ էր իրականացվում, և այդպիսով պարտատոմսերի երկրորդային շուկայի աշխուժացման գործում մեծ դեր ունի նաև Կենտրոնական բանկը: Երկրորդային շուկայի այս աշխուժությունը իր հերթին հանգեցրեց պետական պարտատոմսերի իրացվելիության աճին:

2000թ. պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում տեղի են ունեցել հետևյալ գործառնությունները.

- կատարվել է 2469 գործարք, որից՝ 220-ը ԿԲ-ի կողմից
- գործարքների ընդհանուր ծավալը (բացառությամբ ԿԲ-ի գործարքները) կազմել է 73.930.877.000 դրամ, միջին կշռված եկամտաբերությունը՝ 24.69%, միջին կշռված ժամկետը՝ 205 օր, միջին օրական ծավալը՝ 289.423.171 դրամ, գործարքների միջին օրական քանակը՝ 9:
- ամսական կտրվածքով վերը նշված ցուցանիշները ունեն հետևյալ տեսքը.


Աղյուսակ 6

**Երկրորդային շուկայում կատարված գործառնությունները 2000թ.**

	Գործ. ծավալը	Գործ. միջ. քանակ	Միջ. եկամտ.	Միջ. օր. ծավալը	Միջ. ժամկետ.
Հուն-00	8,462,008.0	17	41.52%	428,251,450	145
Փետ-00	6,659,872.0	12	29.42%	317,136,762	134
Մարտ-00	8,144,910.0	11	25.01%	350,213,435	157
Ապր-00	7,128,330.0	9	21.66%	384,488,611	220
Մայիս-00	8,139,910.0	8	19.10%	384,881,810	308
Հուն-00	8,494,720.0	9	18.08%	407,243,095	236
Հուլ-00	3,413,570.0	6	19.70%	179,661,421	219
Օգոս-00	5,457,640.0	7	21.09%	223,266,864	276
Սեպ-00	6,060,145.0	10	22.22%	286,091,238	201
Հոկտ-00	7,376,464.0	8	23.31%	303,056,136	204
Նոյմբ-00	2,479,994.0	4	23.88%	112,727,000	197
Դեկտ-00	2,113,325.0	3	29.79%	96,060,227	117
ընդամենը	73,930,877.0	9	24.69%	289,423,171	205

**Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի ծավալներն ու եկամտաբերությունները 2000թ.**


Նկար 9




- ԿԲ-ի կողմից կատարվել է 9.365.460.000 դրամի գործարք, որից՝ առք 8.517.175.000 դրամ, վաճառք 848.285.000 դրամ:
- Գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 21.43%, որից առք կատարվել է 20.16% միջին կշռված եկամտաբերությամբ, վաճառք՝ 37.82% միջին կշռված եկամտաբերությամբ:

ԿԲ-ի գործարքները ըստ ամիսների			
ամսաթիվ	ընդամենը	գործարքի ծավալը ԱՌՔ	գործարքի ծավալը ՎԱՃԱՌՔ
Հունվ-00	1,369,282,000	655,997,000	713,285,000
Փետ-00	-	-	-
Մար-00	2,459,041,000	2,459,041,000	-
Ապր-00	627,154,000	597,154,000	30,000,000
Մայիս-00	1,948,920,000	1,948,920,000	-
Հուն-00	1,461,410,000	1,461,410,000	-
Հուլ-00	105,000,000	-	105,000,000
Օգոս-00	-	-	-
Սեպ-00	-	-	-
Հոկտ-00	874,031,000	874,031,000	-
Նոյմբ-00	520,622,000	520,622,000	-
Դեկտ-00	-	-	-
<b>ընդամենը</b>	<b>9,365,460,000</b>	<b>8,517,175,000</b>	<b>848,285,000</b>


*Ներքին պետական պարտքի և շրջանառության մեջ գտնվող ՊԿՊ-երի կառուցվածքն ըստ ժամկետայնության*




1996թ.




1997թ.




1998թ.



1999թ.







## ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանն իր վրա վերցրեց ԽՍՀՄ-ի արտաքին և ակտիվները, և պարտքերը, ուստի անկախացումից հետո ՀՀ արտաքին պետական պարտքը գրոյական էր:

Արտաքին պարտքի տեսքով միջոցների ներգրավումը հնարավորություն է տալիս ավելի մեծ ներդրումներ կատարել, քան թույլ են տալիս երկրի ներքին հնարավորությունները, և նպատակ ունեն խթանել ազգային տնտեսության աշխուժացումը՝ հիմքեր ստեղծելով հետագայում ներքին արտադրության և արտահանման աճի համար:

ՀՀ արտաքին պետական պարտքը ձևավորվել է 1992 թվականից: ՀՀ արտաքին առաջին վարկատուներն էին Եվրամիությունը և Ռուսաստանի Դաշնությունը: Ներկայումս ՀՀ արտաքին պետական պարտքի մեջ ամենամեծ մասնաբաժինը ունի Համաշխարհային Բանկը:

ՀՀ արտաքին պետական պարտքը ձևավորվել է տնտեսության տարբեր ոլորտներում (Էներգետիկա, գյուղատնտեսություն, ճանապարհային տնտեսություն, ջրմուղ-կոյուղի, առողջապահություն, կրթություն և այլն) նպատակային ներդրումներ կատարելու համար, ինչպես նաև անմիջականորեն պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով կառուցվածքային բարեփոխումների վարկերի միջոցով:


Էներգետիկայի ոլորտի, աղետի գոտու վերականգնման, տրանսպորտի, փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև համայնքային զարգացման ծրագրի շրջանակներում ներգրավված արտաքին վարկերի գծով տրամադրվել են ենթավարկեր և նախատեսվում է այդ միջոցների վերադարձ պետական բյուջե:

ՀՀ արտաքին պարտքը (ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ, և նրանց կողմից տրամադրված արտաքին երաշխիքներ) 2000թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է **859.5** մլն ԱՄՆ դոլար, որից.

- 664.9 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունների գծով,
- 175.5մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կենտրոնական բանկի արտաքին վարկային պարտավորությունների գծով,
- 19.1 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով:

## ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը ըստ վարկառուների

Նկար 10




2000թ. ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են վարկեր 49.1 մլն ԱՄՆ դոլար գումարով (ամբողջությամբ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով): ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով կատարվել է 23.576 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում, որից` 7.614 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության, 15.962 մլն ԱՄՆ դոլարը` ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով:

Այսպիսով 1999թ. վերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը (առանց երաշխիքների) գուտ արտահայտությամբ աճել է 25.524 մլն ԱՄՆ դոլարով: Սակայն, հաշվի առնելով, որ ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը և 2000թ. ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրանց կուրսերը զգալի նվազել են, ՀՀ արտաքին պարտքի ծավալը (առանց երաշխիքների) 2000թ. ընթացքում 1999թ. նկատմամբ չի աճել:

### ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների դինամիկան 1996-2003թթ. ընթացքում (1000 ԱՄՆ դոլար)


Նկար 11



Հարկ է նշել, որ 2000թ. վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի 71 %-ը կազմում են SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը.

2000թ. վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը ըստ տրամադրության արժույթի

Նկար 12



ՀՀ արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ 2000թ. կազմել է 45%:

Արտաքին պարտքի գնահատման կարևորագույն ցուցանիշներից է հանդիսանում զուտ ներկա արժեքը (ՉՆԱ): 2000թ. վերջին այն կազմել է 532 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 28 %-ը:


ՉՆԱ (Չուտ ներկա արժեք) իրենից ներկայացնում է առկա պարտքի ապագա սպասարկման ներկա արժեքը

ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի կողմից տրամադրված արտաքին երաշխիքները կազմում են Հայաստանի արտաքին պարտքի միայն 2%-ը և նվազման միտում ունեն:

2000թ. վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտավորությունների (առանց երաշխիքների) 77 %-ը կազմում են բազմակողմանի վարկատուներից ստացված վարկային միջոցները՝ որից 56 %-ը ՀՀ կառավարության կողմից ստանձնած վարկային պարտավորությունների գծով և 21 %-ը Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) կողմից ՀՀ կենտրոնական բանկին տրամադրած վարկերի գծով, 23 %-ը կազմում են երկկողմ վարկատուներից ստացված վարկերը.

Արտաքին պարտքի կառուցվածքը ըստ դոնորների 2000թ.


Նկար 13



ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքի վերլուծությունը ըստ դոնորների կարևորվում է այն հանգամանքով, որ տարբեր խմբի վարկատուների կողմից տրամադրված վարկերը տարբերվում են իրենց արտոնյալության ցուցանիշով, ինչը անմիջականորեն ազդում է արտաքին պարտքի սպասարկման տարեկան ծավալների վրա, այնպես էլ երկրի պարտքային բեռի գնահատման ցուցանիշների և չափանիշների վրա:

2000թ. վերջի դրությամբ ՀՀ կառավարության և ԿԲ-ի արտաքին պարտավորությունների գծով բազմակողմանի դոնորների կառուցվածքը

Նկար 14




Բազմակողմ վարկատուների կողմից տրամադրված վարկերից մեծ մասը (89%) ունեն արտոնյալ պայմաններ՝ ցածր տոկոսադրույք, հիմնական գումարի մարման արտոնյալ ժամկետ, փոքր մասնաբաժիններով մարման ժամանակացույց, վարկերի տրամադրման երկար ժամկետ: Մասնավորապես, Համաշխարհային Բանկի խմբին պատկանող

Զարգացման Միջազգային Ընկերակցության (ՉՄԸ) և Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի (Գ-ՉՀՄ) կողմից տրամադրված վարկերի համար վճարվում է միայն սպասարկման վճար՝ տարեկան 0.75% տոկոսադրույքով, հիմնական գումարի մարումը սկսում է վարկի տրամադրումից միայն 10 տարի հետո (արտոնյալ ժամանակաշրջան): Այս վարկերը տրամադրվում են 35 (ՉՄԸ) և 40 (Գ-ՉՀՄ) տարով:

2000թ. վերջի դրությամբ ՀՀ կառավարության և ԿԲ-ի արտաքին պարտավորվածությունների գծով միակողմանի դոնորների կառուցվածքը

Նկար 15




Երկկողմ դոնորների կողմից տրամադրված վարկերից 66%-ը ոչ արտոնյալ պայմաններով է՝ 114.7 մլն<sup>3</sup> ԱՄՆ դոլար (59%) և 12.8 մլն ԱՄՆ դոլար (7%) բաժին է ընկնում համապատասխանաբար Ռուսաստանին և Թուրքմենստանին: Այս խմբի դոնորներից ԱՄՆ-ի<sup>4</sup>, Ֆրանսիայի, Գերմանիա տրամադրված վարկերը արտոնյալ են: Դրանք միասին կազմում են երկկողմ դոնորներից ստացված վարկերի ընդամենը 34 % -ը:

Ընդհանուր առմամբ արտոնյալ վարկերը ՀՀ արտաքին պարտքի մեջ կազմում են 74 %.

<sup>3</sup> Պարտքի մեջ ներառված է նաև 2000թ. Ռուսաստանի ժամկետանց տոկոսավճարների գծով պարտքը

<sup>4</sup> Լիբանանի և Գերմանիայի հիմնադրամների կողմից տրամադրված վարկերը ևս ընդգրկված են այստեղ

2000թ. վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը ըստ արտոնյալության  
Նկար 17




2000թ. ընթացքում ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով սպասարկումը կազմել է 34.959 մլն ԱՄՆ դոլար, որից.

- ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունների գծով 16.128 մլն ԱՄՆ դոլար, որից 8.514 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարների գծով և 7.614 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով,
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով 18.831 մլն ԱՄՆ դոլար, որից 2.869 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարների գծով և 15.962 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով:

2000թ. ընթացքում բազմակողմ վարկատուների նկատմամբ պարտավորությունների սպասարկման ծավալները գերազանցում են երկկողմ վարկատուների նկատմամբ պարտավորությունների սպասարկման ծավալներին:

Արտաքին պարտքի սպասարկման կառուցվածքը ըստ դոնորների 2000թ.

Նկար 18



Մրա պատճառը 2000 թվականին Թուրքմենստանի կողմից տրամադրված վարկի վերաձևակերպումն էր, ինչպես նաև Ռուսաստանի նկատմամբ պարտավորությունների կատարման դժվարությունները: Ռուսաստանի կողմից տրամադրված վարկերի վերաձևակերպման շուրջ 2000թ. ընթացքում բանակցություններ են վարվել:

Նշենք, որ.


– Թուրքմենստանի կողմից տրամադրված վարկի սպասարկումը վերաձևակերպում չլինելու դեպքում պետք է կազմեր մոտ 7.3 մլն ԱՄՆ դոլար՝ 6.4 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարում և մոտ 1 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճար (որից փաստացի վճարվել է միայն 1.8 մլն ԱՄՆ դոլար՝ 1.6 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարում և 0.2 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճար): Վերաձևակերպման արդյունքում ընդհանուր առմամբ 2000թ. ընթացքում չի վճարվել 5.5 մլն ԱՄՆ դոլար՝ 4.8 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարում և մոտ 0.7 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճար:

Թուրքմենստանի կողմից տրամադրված վարկի վերաձևակերպման արդյունքում վարկի մարման ժամանակաշրջանը 2002 թվականից տեղափոխվել է մինչև 2004 թվականի կեսը, մարումները կատարվելու են ավելի փոքր մասնաբաժիններով,

– Ռուսական վարկերի սպասարկման գծով 2000թ. վճարվել է ընդամենը 1.46 մլն ԱՄՆ դոլար՝ 0.597 մլն ԱՄՆ դոլար որպես տոկոսավճար և 0.861 մլն ԱՄՆ դոլար որպես հիմնական գումարի մարում: Ընդհանուր առմամբ 2000թ. ռուսական վարկերի գծով չի վճարվել 18.8 մլն ԱՄՆ դոլար՝ 12.7 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարում և 6.1 մլն ԱՄՆ տոկոսավճար:

ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունների գծով սպասարկումը 1997-2000թթ. ընթացքում ունի հետևյալ տեսքը.

**ՀՀ կառավարության պարտավորությունների սպասարկում (մլն ԱՄՆ դոլար)**  
Նկար 19



1998թ. ՀՀ կառավարության կողմից արտաքին պարտքի սպասարկման կտրուկ աճը պայմանավորված է Եվրամիության նկատմամբ 1992թ. և 1993թ. ընթացքում ձևավորված պարտավորությունների մարման հետ, որն իրականացվել է այդ պարտավորությունների

վերաձևակերպման շրջանակներում: 1998թ. ՀՀ կառավարությունը մարել է վերը նշված պարտավորությունները 50.9 մլն էքյու ընդհանուր գումարով, որից 48.4 մլն էքյու որպես հիմնական գումարի մարում և 2.5 մլն էքյու որպես տոկոսավճար: Չուգահեռաբար, նշված վերաձևակերպման շրջանակներում 1998թ. Եվրամիությունից ստացվել է 28 մլն էքյու գումարով վարկ և 8 մլն էքյու դրամաշնորհ:

Նշենք, որ 28 մլն էքյու գումարով վարկի հիմնական գումարի մարումը նախատեսված է 2009-2013 թթ., սակայն համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրամիության միջև 1998թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված «Փոխըմբռնման հուշագրի» Եվրամիությունը իր համաձայնությունն է տվել 1999-2002թթ ընթացքում յուրաքանչյուր տարի Հայաստանին տրամադրել 5.5 մլն եվրո դրամաշնորհ (ընդհանուր առմամբ 22 մլն եվրո) պայմանով, որ Հայաստանը 1999-2002թթ. ընթացքում վաղաժամկետ մարի նշված վարկը՝ յուրաքանչյուր տարի 7 մլն եվրո գումարի չափով: 2000թ. Հայաստանի Հանրապետության և Եվրամիության փոխադարձ համաձայնությամբ Եվրամիության կողմից վարկի մարման նպատակով դրամաշնորհ չի տրամադրվել, և Հայաստանը հիմնական գումարի մարում չի կատարել:

Ընդհանուր առմամբ, երկրի արտաքին պարտավորվածության մակարդակի գնահատման համար օգտագործվում են մի շարք ցուցանիշներ: Աղյուսակ 1-ում բերվում են այդ ցուցանիշների գծով առկա սահմանափակումները տարբեր պարտավորվածության երկրների համար և համեմատվում Հայաստանի նմանատիպ փաստացի տվյալների հետ:

Աղյուսակ 8.

<b>ՉՆԱ/ՀՆԱ</b>	
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	80% և ավել
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	48%-80%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	մինչև 48%
<b>Հայաստան 1998թ./1999թ./2000թ.</b>	<b>28%, 30%, 28%</b>
<b>ՉՆԱ/Արտահանում</b>	
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	220% և ավել
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	132%-220%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	մինչև 132%
<b>Հայաստան 1998թ./1999թ./2000թ.</b>	<b>152%,144%,123%</b>
<b>պարտքի սպասարկում/Արտահանում</b>	
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	25.9%
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	23.45%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	7.8%
<b>Հայաստան 1998թ./1999թ./2000թ.</b>	<b>28%, 16%, 11%</b>
<b>Տոկոսավճար/Արտահանում</b>	
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	11.65%
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	9.85%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	3.6%
<b>Հայաստան 1998թ./1999թ./2000թ.</b>	<b>6.2%, 5%, 3%</b>
<b>Արտաքին պարտք/Արտահանում</b>	
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	387.95%
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	209.00%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	64.00%
<b>Հայաստան 1998թ./1999թ./2000թ.</b>	<b>220%, 227.3%, 198%</b>



<b>Արտաքին պարտք/ՀՆԱ</b>	
Սահման	50.00%
<b>Հայաստան 1998թ./1999թ./2000թ.</b>	<b>41%, 47%, 45%</b>
<b>Պարտքի սպասարկում/Բյուջեի եկամուտներ</b>	
Միջին ցուցանիշ	22.5%
<b>Հայաստան 1998թ./1999թ./2000թ.</b>	<b>29.4%, 17%, 15%</b>

Սակայն, հաշվի առնելով, որ Հայաստանը 2000թ. իր արտաքին ֆինանսական պարտավորությունները ամբողջությամբ չի կատարել, Արտաքին պարտքի սպասարկում/Արտահանում, Տոկոսավճար/Արտահանում, Պարտքի սպասարկում/Բյուջեի եկամուտներ ցուցանիշները 2000թ. համար ճիշտ չեն արտահայտում իրական պատկերը:

Հետագա տարիներին արտաքին ֆինանսական միջոցներ ներգրավելիս ուղենիշ պետք է հանդիսանա արտաքին պետական պարտքի աճի տեմպերի կրճատումը, վարկային պորտֆելի վերակազմավորումը՝ նախապատվությունը արտոնյալ վարկերին տալու առումով: Վերոհիշյալ դրույթը ենթադրում է նոր վարկերի ներգրավում առավելապես միջազգային ֆինանսական այնպիսի կազմակերպություններից, որոնք արտոնյալ վարկեր են տրամադրում վարկառու երկրների տնտեսական զարգացմանն աջակցելու նպատակով: Մյուս կողմից, ընդունված ռազմավարությունը ենթադրում է երկկողմ ոչ արտոնյալ վարկերի տեսակարար կշռի նվազեցումը նաև վերաձևակերպումների միջոցով:

Միաժամանակ, անհրաժեշտություն է առաջանում գնահատել ՀՀ արտաքին պարտքի բեռը տնտեսության և մասնավորապես պետական բյուջեի վրա, հստակ սահմանագծել պարտավորվածության առավելագույն թույլատրելի սահմանները և մոտակա տարիներին նոր վարկային պայմանագրերը կնքել բացառապես արտոնյալ պայմաններով:

Այս խնդրի լուծմանը մեծապես կնպաստի «Հայաստանի Հանրապետության պետական պարտքի մասին» օրենքի ընդունումը, որը կամբողջացնի պարտքի կառավարման օրենսդրական դաշտը: